

ԳԼՈՒԽ ԻԷ

Առաւօտն հա սեր էր, եւ Սուրեն չէր կրցեր աչքերը գոցել, ուստի ելաւ շրշան մ'ըրաւ գիւղին մէջ, որ ոչ գիւղ էր եւ ոչ քաղաք, բոլոր լեռը շարունակութիւն մ'էր խրճիթներու, հիւղերու եւ բաւական լաւ տուներոս անտառ եւ պարտեզ իրարու էին խառնուած, տեղ-տեղ պատուարներ եւ պատնէշներ ամրացուցեր էին բնիկ անամիկ դիրքեր, կանայք եւ աղջկունք, երիտասարդք եւ տղայք մրջիւններու պէս կը վխտային, այր մարդիկ գրեթէ բոլորն էլ անբաժան ունէին իրենց զէնքերը: Յայտնի կը տեսնուէր, թէ ասորուոց զանազան քաղաքաց եւ գաւառաց թնակիչք լեցուէր նոր ժողովուրդ մը կազմեր էին. հռչակաւոր եւ մեծ Անտիոքի բնակիչքը իրենց քաղաքականացեալ նրբութեան հետ բերեր էին իրենց բարուց զեղծմունքը, ինչպէս երուսաղէմացին իւր կրօնասէր նախապաշարմունքը: Ասորի լեզուին հետ գրեթէ հաւայ սար կը քալէր աղաւաղեալ յունարէն մը: Խեղճուկ եկեղեցեաց մէջ ոսկեղէն եւ արծաթեղէն ճոխ հանդերձանք եւ կարասիք կը փայլէին: Մահմեդական երկրագործը ահագին տեղափոխութիւն բերած էր սիւթական եւ բարոյական Ամանոսի եւ Լիբանանու լեռանց վրայ, եւ երկայն դիտողութեանց պէտք չի կար Սուրենի սուր աչաց համար:

Կը տեսներ նաեւ թէ ինչպէս ձիուն շուրջը իբրեւ թիկնապահք տասներկու լաւ զինեալ մարդիկ կը պտըտէին, գիշերուան խօսակցութենէն եպիսկոպոսին կ'ամա-ականայ բառերն այդ փոքրիկ խումբին կրկնակի պաշտօնը իրեն յայտնի կ'ընէին: Ուստի ինք իւր միամիտ կերպը առանց թողլու կը շարունակէր ընթացքը, երբ սրընթաց հասան քանի մը պատանիք իմացնելու, թէ իշխանուհին հասած կը սպասէր:

Քահինայ էր այս կնոջ անունը, լեռնական խոշոր գեղեցկու- թեան մէջ բիւզանդական նրբամտութիւն ի նմա նշմարեց Սուրեն, առջի նայուածքով: Մեծ յարգանօք ընդունելութիւն ըրաւ Տիկինն իրեն, նոյն տախտին վրայ քովն առաւ նստեցուց, շնորհակալութիւնք ըրաւ իւր դիւցազնական օգնութեան համար, երկնառաք հրեշտակ զինք անուանեց: Սուրեն՝ արաբական լեզուին մէջ իւր տկար գիտութիւնը յայտնելով՝ համառօտեց պատասխանը, եւ ինչպէս կինը զինք կը դիտէր՝ ինք նաեւ կը դիտէր իւր շարժմունքը, որ ազատ էր քան թէ ինչ որ կնոջ մը կը վայլէր:— Իւր զգեստները, ուր ծիրանին եւ բեհեզը եւ հնդքուկ շալը կը փողփողէին հարուստ ապարանջաններու եւ մանեակներու հետ, մէջքը ոսկի գօտին, ուր ականակուռ դաշոյն մը աչք կը շլացնէր, իւր բարձր հասակը, մեծ եւ փայլուն աչքերը, թանձրկեկ շրթունքը՝ նշան սիրահորդ բնութեան, իւր գրեթէ